ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2026թ. № ---------- -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 121 ՇԵՆՔԻ Հ. 55՝ 54,26 ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ. 121 շենքի հ.55՝ 54,26 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 17.02.2025թ. հ. 17022025-01-0440 վկայական) անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Մարինե Գևորգի Վարդանյանին, Լիանա Սեդրակի Բոյախչյանին և Արարատ Սեդրակի Բոյախչյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 121 ՇԵՆՔԻ Հ. 55 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ. 121 շենքի հ.55 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Մարինե Գևորգի Վարդանյանին, Լիանա Սեդրակի Բոյախչյանին և Արարատ Սեդրակի Բոյախչյանին:

Անդրանիկի փողոցի հ.121 շենքի հ.55 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 17.02.2025թ. հ.17022025-01-0440 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Անդրանիկի 121 շենքի 55 բնակարանը Տանիա Լապատինան առանց համապատասխան ձևակերպումների /ներքին առուվաճառքի պայմանագրով/ վաճառել է Սեդրակ Նորիկի Բոյախչյանին: Սեդրակ Բոյախչյանը իր ընտանիքի հետ միասին 2000թ.-ից բնակվել է քննարկվող բնակարանում /հիմք համատիրության տեղեկանքը/: Բոլոր կոմունալ վճարները կատարվել են Սեդրակ Բոյախչյանի կողմից:

2022թ. Սեդրակ Բոյախչյանը մահացել է, իսկ ընտանիքի մյուս անդամները շարունակել են բնակվել և տնօրինել բնակարանը, կատարել բոլոր կոմունալ և պարտադիր վճարները:

Ըստ անձնագրերի և վիզաների վարչության Մալաթիայի բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկանքի՝ Մարինե Վարդանյանը 2008թ.-ից, Լիանա և Արարատ Բոյախչյանները 2010թ.-ից հաշվառվել են քննարկվող բնակարանում:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացիներ Մարինե Վարդանյանի, Լիանա Բոյախչյանի, Արարատ Բոյախչյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարինե Վարդանյանը իր երեխաների հետ 20 տարի և ավել բնակվում է, իսկ 18 տարի հաշվառված է քննարկվող բնակարանում, բարեխղճորեն տիրապետում և տնօրինում գույքը, կատարում բոլոր պարտադիր վճարները,

իսկ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 463-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ